
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ 1915 Թ. «ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ»

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՅԱՆ

1915 թ. Օսմանյան կայսրության իշխանություններն ընդունեցին ժամանակավոր մի օրենք, որը «իրավական» քող ծառայեց հայ ժողովրդի կանխամտածված զանգվածային ոչնչացման՝ ցեղասպանության համար՝ դառնալով այդպիսով մարդկային պատմության ամենադաժան և ամենաարյունալի օրենքներից մեկը: Հայոց ցեղասպանության պատմության հետազոտմանը նվիրված մասնագիտական գրականության մեջ այն հաճախակի հիշատակվում է որպես «Տեղահանության օրենք»¹: Սակայն ցայսօր նրա և՛ բովանդակության, և՛ հրապարակման առանձնահատկությունների հետ կապված շատ հանգամանքներ ինչպես մեզանում, այնպես էլ արտերկրում մնում են չպարզաբանված՝ նպաստելով իրարամերժ մոտեցումների դրսևորմանը:

Վիճահարույց խնդիրներից է, օրինակ, օրենքի ընդունման և հրապարակման ամսաթվերի հարցը: Նույնիսկ այնպիսի ճանաչված ցեղասպանագետ, ինչպիսին Վահագն Տատրյանն է, իր երկու հիմնարար աշխատություններում նշում է այդ օրենքի հրապարակման երկու տարբեր ամսաթվեր՝ երկուսն էլ սխալ: Դրանցից առաջինում, որը հրատարակվել է 1995 թ., նշված է 1915 թ. մայիսի 26-ը²: Չորս տարի հետո լույս տեսած նրա գրչին պատկանող մեկ այլ գրքում կարդում ենք, որ այդ օրենքը մամուլում հրապարակվել է 1915 թ. մայիսի 27-ին³: Մինչդեռ թուրքական պաշտոնական վավերագրերը փաստում են, որ առաջին ամսաթիվը վերաբերում է ներքին գործերի նախարար Թալեաթի գաղտնի զեկուցագրին, որով նա դիմել է կառավարությանը և պահանջել, որ ընդունվի օրենք հայոց տեղահանության մասին⁴, իսկ երկրորդը՝ օրենքի ընդունման ամսաթիվն է, այլ ոչ թե մամուլում հրապարակման, ինչը տեղի է ունեցել հինգ օր ավելի ուշ, 1915 թ. հունիսի 1-ին պաշտոնաթերթ «Թաքվիմ-ի վաքայիի» առաջին էջի վրա: Այդ ճշտումը կարևոր է, քանի որ համաձայն օրենքի 3-րդ հոդվածի՝ այն գործողության մեջ պիտի մտնեք հրապարակման օրից:

¹ Թուրքական պատմագրության մեջ ընդունված է այն անվանել “Tehcir kanunu” («Տեղահանության օրենք») կամ էլ՝ “Sevkiyat kanunu” («Ուղարկելու օրենք»):

² V. N. D a d r i a n. The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Providence, Oxford, 1995, p. 400. Սույն հոդվածի բոլոր ամսաթվերը, բացի հատուկ նշվածներից՝ նոր տոմարով են:

³ V. N. D a d r i a n. Warrant for Genocide: Key Elements of Turko - Armenian Conflict. New Brunswick, 1999, p. 123.

⁴ Այդ գաղտնի վավերագրի տեքստը՝ հայերեն թարգմանությամբ, առաջին անգամ հրատարակել է Հայկազն Ղազարյանը. տե՛ս Հ ա յ կ ա զ ն Գ. Ղ ա զ ա թ յ ա ն. Ցեղասպան թուրքը, Բեյրութ, 1968, էջ 324–328:

Հայոց ցեղասպանության պատմության հետազոտմանը նվիրված մի շարք այլ աշխատություններում ևս կարելի է հանդիպել վերոհիշյալ սխալին: Նշենք, օրինակ, մեզանում քաջ հայտնի Հայկազն Ղազարյանի և Լևոն Վարդանի մենագրությունները, որտեղ նույնպես առկա է շփոթմունք օրենքի ընդունման ու մամուլում հրապարակման ամսաթվերի միջև⁵:

Ամսաթվերի մեջ շփոթվում են նաև թուրք որոշ պատմաբաններ: Այսպես, օրինակ, Մեհմեդ Հոջաօղլուն սխալմամբ գրում է, թե օրենքը սկսել է գործել 1331 թ. մայիսի 14-ին (համաձայն Օսմանյան կայսրության պաշտոնական գրագրության մեջ օգտագործված ռումի օրացուցային համակարգի)⁶, ինչը եվրոպական օրացուցային համակարգի նոր տոմարով համապատասխանում է 1915 թ. մայիսի 27-ին: Մակայն օրենքը պաշտոնապես գործողության մեջ է դրվել մամուլում հրապարակման օրից, այսինքն՝ 1915 թ. հունիսի 1-ից:

Օրենքի ընդունման ու հրապարակման ամսաթվերի հետ կապված սխալը առկա է նաև թուրք պատմաբան Բսմայիլ Համի Դանիշմենդի մոտ, որի «Օսմանյան պատմության բացատրական տարեգրություն» վերտառությամբ քառահատորյակը տասնամյակներ շարունակ օսմանագետների սեղանի գիրքն է: Այդ աշխատության չորրորդ հատորում հեղինակը գրում է, թե «Տեղահանության օրենքը» հրապարակվել է 1915 թ. մայիսի 27-ին՝ շփոթելով այդ ամսաթիվը օրենքի ընդունման ամսաթվի հետ⁷:

Մեկ այլ շփոթմունքի ենք հանդիպում ԱՄՆ-ում բնակվող թուրք պատմաբան Թաներ Աքչամի Հայոց ցեղասպանությանը նվիրված գրքերից մեկում, որտեղ նա ճիշտ նշելով «Տեղահանության օրենքի» ընդունման ու հրապարակման ամսաթվերը (մայիսի 27 և հունիսի 1) գրում է, որ դրանք վերաբերում են կառավարության որոշմանը՝ տեղահանություն սկսելու մասին: Ակնհայտ է, որ նա նույնացնում է «Տեղահանության օրենքը» և հայերի տեղահանությունը սկսելու վերաբերյալ կառավարության որոշումը, ինչը սխալ է⁸: Կառավարության «Տեղահանության որոշումը» ընդունվել է Նախարարների խորհրդի (Meclis-i Vükelâ) մայիսի 30-ին տեղի ունեցած նիստի ընթացքում, այսինքն՝ «Տեղահանության օրենքի» ընդունումից երեք օր անց: Համենայն դեպս, այդ է վկայում Թուրքիայի վարչապետի գրասենյակին կից Պետական արխիվների գլխավոր վարչության և Օսմանյան արխիվի վարչության ղեկավարության կողմից հրատարակված Նախարարների խորհրդի նիստի № 163 արձանագրությունը⁹: Ավելի ուշ լույս տեսած իր գրքերից մեկում Թ. Աքչամը, ցուցաբերելով պարտաճանաչ մոտեցում, ուղղել է վերը նշված իր սխալը¹⁰:

⁵ Նույն տեղում, էջ 69, 328, Լ և ն ն Վ ա ր դ ա ն. Հայկական տասնհինգր և հայերու լքեալ գույքերը (Քննական ակնարկ ըստ թրքական վավերագրիներու), Բեյրութ, 1970, էջ 117:

⁶ Mehmed Hocaoglu. Tarihte Ermeni mezalimi ve Ermeniler. İstanbul, 1976, s. 645.

⁷ İsmail Hami Danişmend. İzahlı osmanlı tarihi kronolojisi. Cilt 4, M. 1703 – 1924, H. 1115 – 1342. İstanbul, 1955, s. 428.

⁸ Tamer Akçam. Türk ulusal kimliği ve Ermeni sorunu. 2. baskı. İstanbul, 1993, s. 109.

⁹ Տեքստը տե՛ս Օսմանի Բեղերին (1915 - 1920). Ankara, 1994, s. 30-32.

¹⁰ Tamer Akçam. İnsan hakları ve Ermeni Sorunu: İttihat ve Terakki'den Kurtuluş Savaşı'na. 2. Baskı. Ankara, 2002, s. 317 - 318.

Ճշգրտման կարիք ունի նաև օրենքի բուն բովանդակությունը, մասնավորապես, նրա հողվածների թիվը: Այդ խնդրի շուրջ պատմագրության մեջ առկա են տարակարծություններ: Սակավաթիվ են աշխատությունները, որտեղ նշվում է օրենքի բովանդակությունը կազմող հողվածների ստույգ թիվը՝ չորսը: Դրանցից արժե հիշատակել ամերիկահայ Գրիկերի կողմից հրատարակված ուշագրավ գիրքը¹¹: Վերջինս, թերևս, այն եզակի հեղինակներից է, որը, ըստ ամենայնի, ծանոթ է եղել «Թաքվիւ-ի վաքայի» պաշտոնաթերթում տպագրված «Տեղահանության օրենքի» տարբերակին և այդ պատճառով նա չի սխալվում, երբ անդրադառնում է օրենքի բովանդակության, ինչպես նաև ընդունման ու հրապարակման ամսաթվերի հետ կապված հանգամանքներին¹²: Նույնը կարելի է ասել նաև թուրք ճանաչված պատմաբան Թարքը Չաֆեր Թունայայի մասին¹³:

Թուրք հեղինակները, հիմնականում, նախընտրում են նշել, որ «Տեղահանության օրենքը» ունեցել է երեք հողված: Նրանք նույնպես չեն գրում, թե ու՞մ ստորագրություններն են դրված օրենքի տակ: Ժամանակին այդպես են վարվել, օրինակ, Հայոց ցեղասպանության վերաբերյալ թուրքական պաշտոնական ժխտողական հայեցակարգի հիմնասյուները հանդիսացող Էսաթ Ուրասը¹⁴ և Քյամուրան Գյուրունը¹⁵: Հետագայում Թուրքիայում մեծ հեղինակություն վայելող այդ պատմաբանն էրի շրջանառության մեջ դրված օրենքի աղճատված տարբերակն անվերապահորեն ընդունվել է մի շարք թուրք հեղինակների կողմից ու տեղ գտել նրանց ինչպես գիտական աշխատություններում¹⁶, այնպես էլ հրապարակախոսական հողվածներում¹⁷: Նույնիսկ այնպիսի փորձառու պատմաբան, ինչպիսին Բիլյալ Շիմշիրն է, որն այսօր Թուրքիայում համարվում է Հայկական հարցի լավագույն «ուսումնասիրողներից» մեկը, իր գրքում զետեղելով «Տեղահանության օրենքի» տեքստը, նույնպես անտեսում է այն փաստը, որ օրենքի պաշտոնապես հրատարակված տեքստն ունեցել է չորս հողված, և սահմանափակվում է միայն երեքի մեջբերումով¹⁸:

Հետևելով իրենց հոգևոր հայրերի օրինակին՝ թուրք պատմաբանների երիտասարդ սերնդի ներկայացուցիչները շարունակում են քողարկել «Տեղահանության օրենքի» բուն բովանդակությունը: Այսպես, օրինակ, Սյուլեյման Դեմիրելի անվան համալսարանի դասախոս Հասան Բաբաջանը, դիմելով «գիտական» աճապարարության, կիրառում է հետևյալ հնարքը. «Թաքվիւ-ի վաքայիի» 1915 թ. հունիսի 1-ի համարում հրատարակված օրենքի տեքստից մեջբերում է օրենքի միայն երկու հողվածները՝ երկրորդ

¹¹ Եռզրատի հայասպանության վավերագրական պատմությունը: Պատրաստեց՝ Գրիկեր, Նյու Յորք, 1980:

¹² Նույն տեղում, էջ 37–38:

¹³ T a r ı k Z a f e r T u n a y a. Türkiye'de Siyasal Partiler. Cilt I, İkinci Meşrutiyet Dönemi, 1908 - 1918. Genişletilmiş ikinci baskı. İstanbul, 1988, s. 580.

¹⁴ E s a t U r a s. Tarihte Ermeniler ve Ermeni Meselsi. Yeniden gözden geçirilmiş ve genişletilmiş 2. Baskı. İstanbul, 1987, s. 605.

¹⁵ K â m u r a n G ü r ü n. Ermeni dosyası. İkinci Baskı. Ankara, 1983, s. 214.

¹⁶ Տե՛ւ, օրհնակ, Y a v u z E r c a n. Ermeniler ve Ermeni Sorunu. – “Yeni Türkiye“, 2001, ocak-şubat, yıl 7, sayı 37: Ermeni Sorunu özel sayısı I, s. 49.

¹⁷ Տե՛ւ, օրհնակ, S e f a K a p l a n. 1915'teki trajedi işte bu tehcir kanunuyla başladı.– “Hürriyet“, 29.III.2005.

¹⁸ B i l â l N. Ş i m ş i r. Ermeni Meselesi: 1774 – 2005. Üçüncü basım. Ankara, 2006, s. 299.

հողվածին կցելով օրենքի չորրորդ հոդվածի բովանդակությունը և ընդհանրապես անտեսելով երրորդի գոյությունը¹⁹: Այդպես վարվելով նա, թերևս, ենթադրում էր, որ «Թաքվիմ-ի վաքայիի» 1915 թ. հունիսի 1-ի համարը չի կարող հասու լինել նաև ոչ թուրք մասնագետներին...

Վերջերս թուրքական պաշտոնական պատմագրության մեջ տխրահռչակ այդ օրենքի նկատմամբ դրսևորվում է նոր մոտեցում. նրա գոյությունն ընդհանրապես անտեսվում է: Այդպես է վարվել, օրինակ, Թուրքական պատմական ընկերության (ԹՊԸ) կողմից հրատարակած «Հայեր. աքսոր և վերաբնակեցում» գրքի հեղինակային խումբը: Այստեղ միայն նշված է, որ վերևում արդեն հիշատակված Նախարարների խորհրդի մայիսի 30-ի որոշումը «հավանություն տվեց Ներքին գործերի նախարարության որոշմանը և դրա՝ արդեն ընթացքի մեջ գտնվող իրագործմանը»²⁰: Թերևս, հեղինակները, որոնց թվում է նաև Հայոց ցեղասպանության պատմության թուրք «հետազոտողների» ներկա սերնդի «առաջնորդ» և ԹՊԸ նախագահ Յուսուֆ Հալաչօղլին, այդպիսով ուղղակի փորձել են խուսափել «Տեղահանության օրենքի» բովանդակության մասին կարծիք հայտնելուց: Ավելորդ չէ նշել, որ պրոֆեսոր Հալաչօղլին գրքի ներածությունում պնդում է, որ այն հիմնված է «գիտական չափանիշների և պատմության ուսումնասիրման սկզբունքի վրա»²¹: Դժվար է հասկանալ, թե ինչպե՞ս կարելի է համակերպվել Հայոց ցեղասպանության վերաբերյալ պաշտոնական կարևոր վավերագրի գոյությունն անտեսող «գիտական չափանիշների» հետ:

Ուշագրավ է, որ գրեթե երկու տարի անց արդեն միայնակ հեղինակած իր մեկ այլ գրքում Յու. Հալաչօղլին ոչ միայն հիշատակում է «Տեղահանության օրենքը», այլ նաև վերաշարադրում է նրա բովանդակությունը՝ հետևելով, իհարկե, թուրքական պատմագրության համար արդեն ավանդույթ դարձած մոտեցմանը, համաձայն որի, այդ «օրենքի» իրականացման համար պատասխանատու անձի՝ Էնվերի անունը չի հիշատակվում²²: Ի տարբերություն իր շատ գործընկերների, օրենքի մասին խոսելիս Հալաչօղլին հղում է ոչ միայն ավագ սերնդի պատմաբաններ Յուսուֆ Հիքմետթե Բայուրի²³ և Քյամուրան Գյուրունի²⁴ աշխատությունները, այլև հիշատակում է «Թաքվիմ-ի վաքայի» պաշտոնաթերթի 1915 թ. հունիսի 1-ի համարը, որտեղ տպագրված է «Տեղահանության օրենքը», սակայն այս դեպքում ևս խուսափում է գրել, թե ու՞մ վրա է դրվել անձնական պատասխանատվությունը դրա իրագործման համար՝ սահմանափակվելով բավական մշուշոտ նշումով, որ դրա ընդունումով հայերի «վերաբնակեցումը փոխանցվեց Ներքին գործերի նախարարությունից՝ ռազմական իշխանություններին»²⁵:

¹⁹ H a s a n B a b a c a n, Ermeni Tehciri hakkında bir değerlendirme.– “Yeni Türkiye”, 2001, ocak-şubat, yıl 7, sayı 37: Ermeni Sorunu özel sayısı I, s. 410.

²⁰ H i k m e t Ö z d e m i r, K e m a l Ç i ç e k, Ö m e r T u r a n, R a m a z a n Ç a l ı k, Y u s u f H a l a ç o ğ l u. Ermeniler: sürgün ve göç. İkinci Basım. Ankara, 2004, s. 64.

²¹ Նույն տեղում, էջ VII:

²² Y u s u f H a l a ç o ğ l u. Die Armenierfrage. Klagenfurt, 2006, S. 68.

²³ Y u s u f H i k m e t B a y u r. Türk İnkilâbi tarihi. Cilt III, Kısım 3. Ankara, 1983.

²⁴ Տե՛ս K â m u r a n G ü r ü n. Նշվ. աշխ.:

²⁵ Y u s u f H a l a ç o ğ l u. Նշվ. աշխ., էջ 68:

Թուրքական աղբյուրների հետազոտման արդյունքում հնարավոր եղավ հայտնաբերել ժամանակակից թուրք հեղինակների կեղծիքի «ավանդույթի» սկզբնաղբյուրը: Պարզվում է, որ սկիզբը դրվել է դեռևս 1916 թ.: Այդ տարի, այսինքն էր դեռ շարունակվում էր Հայոց ցեղասպանությունը, օսմանյան կառավարությունը, ձգտելով մոլորության մեջ գցել համաշխարհային հանրությանը և խուսափել հնարավոր պատասխանատվությունից, սկզբում թուրքերեն, հետագայում նաև եվրոպական լեզուներով հրատարակեց ստվարածավալ գիրք-տեղեկագիր, որտեղ լկտիաբար կեղծվում էր իրականությունը և փորձ էր արվում Հայոց եղեռնի պատասխանատվությունը բարդել հենց հայերի վրա: Այստեղ բերված է «Տեղահանության օրենքի» աղճատված, երեք հոդվածից բաղկացած տեքստը, բացակայում են վերջին՝ չորրորդ հոդվածը, ինչպես նաև վերջին պարբերությունը: Նշված չեն նաև օրենքի տակ ստորագրողների անունները²⁶: Եվ դա այն դեպքում, երբ 1915 թ. կառավարական պաշտոնաթերթում տպագրված տեքստում այդ ամենն առկա էին:

Հարկ է նշել նաև, որ օսմանյան կառավարությանը հաջողվեց հասնել իր հպատակին: Ե՛վ ժամանակակիցներից, և՛ հետագա սերունդների պատմաբաններից շատերը «Տեղահանության օրենքի» տեքստի համար որպես հիմք ընդունում էին կառավարական գիրք-տեղեկագրում գետեղված տարբերակը, այլ ոչ թե պաշտոնաթերթի տեքստը: Այդպես է վարվել, օրինակ, Հայոց ցեղասպանության ականատես ու հետազոտող Յոհաննես Լեփսիուսը՝ իր կազմած գերմանական դիվանագիտական վավերագրերի ժողովածուի մեջ ընդգրկելով օրենքի տեքստի այն տարբերակը, որը տեղ է գտել կառավարական գիրք-տեղեկագրի ֆրանսերեն հրատարակությունում²⁷: Հ. Ղազարյանը տպագրել է օրենքի երեք հոդվածների հայերեն թարգմանությունը, նույնպես հիմք ընդունելով նրա այն տարբերակը, որը տեղ է գտել վերը հիշատակված պաշտոնական գիրք-տեղեկագրում, սակայն, ի տարբերություն Լեփսիուսի, նա օգտվել է այդ գրքի թուրքերեն հրատարակությունից²⁸:

Հարց է առաջանում. ինչո՞ւ էր պայմանավորված Օսմանյան կայսրության իշխանությունների նման մոտեցումը: Շրջանառության մեջ գտնվող օսմանյան պաշտոնական վավերագրերը հնարավորություն չեն տալիս հստակ պատասխանել այդ հարցին: Թերևս, կարելի է ենթադրել, որ դրա պատճառը Օսմանյան Թուրքիայի այդ տարիների կառավարող վերնախավի, մասնավորաբար, Էնվեր փաշայի ձգտումն էր ամեն կերպ իր վրայից թոթափել պատասխանատվությունը հայերի տեղահանության համար:

Հայտնի է, որ հայ ժողովրդի զանգվածային տեղահանությունը սկսվել էր նախքան օրենքի ընդունումն ու հրապարակումը և այն իրականացվում էր Ներքին գործերի նախարար, երիտթուրքական կուսակցության փաստացի առաջնորդ Թալեաթի նախա-

²⁶ Ermeni komitelerinin âmâl-i ve harekât-i ihtilâliyesi ilân-i meşrutiyetten evvel ve sonra. İstanbul, 1332, s. 237 - 238.

²⁷ *Skizze Deutschland und Armenien 1914 - 1918: Sammlung diplomatischer Aktenstücke.* Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius. Potsdam, 1919, S. 78.

²⁸ Հ. Ղազարյանի գրքում օրենքի թարգմանությունը գետեղված է երկու անգամ. տե՛ս. Հ ա յ կ ա գ ն Գ. Ղ ա գ ա ռ յ ա ն. նշվ. աշխ., էջ 69-70 և էջ 180-181: Այդ երկու տեքստերի միջև առկա են ոչ բովանդակային տարբերություններ:

ձեռնությամբ ու ղեկավարությամբ: Այդ մասին պահպանվել է Թալեաթի բացառիկ խոստովանությունը, որի մասին իր հուշագրություններում հիշատակում է նրա մերձավոր ընկեր, Օսմանյան կայսրության և «Միություն ու առաջադիմություն» կուսակցության ղեկավար գործիչներից Հալիլը: Ըստ վերջինիս՝ Թալեաթը, ի նկատի ունենալով հայերի տեղահանությունը, խոստովանել է, որ տեղահանության մասին որոշումը ինքն է կայացրել²⁹: Հետաքրքիր է, որ իր հուշագրություններում Թալեաթն ամեն կերպ փորձում է խուսափել պատասխանատվությունից, շեշտում է, որ բանակի ղեկավարությունը, համարելով, որ հայ ազգաբնակչությունը վտանգ է ներկայացնում ռազմական տեսակետից, պահանջում էր սկսել հայերի տեղահանությունը, իսկ ինքը դեմ էր դրան, ինչի համար իր գործընկերների կողմից մեղադրվում էր հայրենիքին անհավատարիմ լինելու մեջ³⁰: Նրա ներկայացմամբ, քանի որ դրությունը գնալով ծանրանում էր, իսկ բանակն էլ հնարավորություն ուներ ձեռնարկել «անհրաժեշտ միջոցներ» նույնիսկ առանց համապատասխան օրենքի, ապա այլևս «օգուտ չկար» ձգձգել տեղահանության մասին օրենքի ընդունումը³¹:

Թալեաթը պնդում է, որ բանակի Գլխավոր շտաբն է նախապատրաստել «Տեղահանության օրենքի» տեքստը և ուղարկել կառավարություն³²: Մակայն հուշերից պարզ չի դառնում, թե որքանով է այն հիմք ծառայել օրենքի վերջնական տարբերակի համար: Այդ հարցին պատասխան չեն տալիս նաև վերջին շրջանում Թուրքիայում հրատարակված օսմանյան պաշտոնական վավերագրերը:

Ուշագրավ է այն փաստը, որ մինչ օրս չի հրատարակվել կառավարության պաշտոնական որևիցե վավերագիր՝ կապված օրենքի հետ: Թուրք պատմաբանների կողմից շրջանառության մեջ է դրվել միայն պաշտոնաթերթ «Թաքվիմ-ի վաքայիի» 1915 թ. հունիսի 1-ի համարի առաջին էջի

²⁹ *Şekû* [H a l i l M e n t e ş e]. Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin anıları. Giriş: İsmail Arar. İstanbul, 1986, s. 216.

³⁰ [T a l â t P a ş a]. Talât Paşa'nın Hâtıraları: Sadırazam Talât Paşa'nın tarihin bir çok gizli taraflarını aydınlatan şimdiye kadar neşredilmemiş şahsi notları. İstanbul, 1946, s. 63–65. *Պիտի հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Թալեաթի հուշագրությունները հրատարակվել են փոփոխված ու խմբագրած տեսքով, ինչը ժամանակին ընդունել է նույնիսկ Յուսուֆ Հիքմետը Բայուրը. տե՛ս. Y u s u f H i k m e t B a y u r. Ermeni Meselesi, Kaynaklar, II: Hatıralar. - "Cumhuriyet", Salı / Cuma Kitabı, 26.06.1998.*

³¹ [T a l â t P a ş a]. Talât Paşa'nın Hâtıraları..., s. 65.

³² *Նույն տեղում, էջ 63–64:*

<p style="text-align: right;">գրքահատիկ արքայի</p> <p style="text-align: right;">۱۳۳۶</p> <p>Տպարան Դոկտոր Կարո Հայրապետյանի</p> <p style="text-align: right;">Երևան Կոմիտասի պող. 12</p>	<h1>ՔՈՒՆՆԵՐԻ ՔՐԵՎԱՆԻՑ</h1> <p>«Տեղի իր խաչակրթ քրքուր ընտրված»</p> <p>[Տիրուհի մատենադարան]</p>	<p style="text-align: left;">Արքայի գրքահատիկ</p> <p style="text-align: left;">1337</p> <p>Գրքահատիկ իր Կարո Հայրապետյանի</p> <p style="text-align: left;">Երևան Կոմիտասի պող. 12</p>
<p>Ինչի տ. Երևան 18 ընթացիկ 1333 և 19 թվական 1331</p>		
<p>Իրավունքի վերաբերյալ</p> <p>Իրավունքի վերաբերյալ կազմակերպության մասին 1930 թվականի մարտի 1-ին հռոմեական կայսրության կողմից ստորագրված հռչակագրի հիման վրա։</p> <p>Իրավունքի վերաբերյալ կազմակերպության մասին 1930 թվականի մարտի 1-ին հռոմեական կայսրության կողմից ստորագրված հռչակագրի հիման վրա։</p> <p>Իրավունքի վերաբերյալ կազմակերպության մասին 1930 թվականի մարտի 1-ին հռոմեական կայսրության կողմից ստորագրված հռչակագրի հիման վրա։</p>	<p>Դրամական հարցեր</p> <p>Վարկի և փողի հարցի մասին 1930 թվականի մարտի 1-ին հռոմեական կայսրության կողմից ստորագրված հռչակագրի հիման վրա։</p> <p>Վարկի և փողի հարցի մասին 1930 թվականի մարտի 1-ին հռոմեական կայսրության կողմից ստորագրված հռչակագրի հիման վրա։</p> <p>Վարկի և փողի հարցի մասին 1930 թվականի մարտի 1-ին հռոմեական կայսրության կողմից ստորագրված հռչակագրի հիման վրա։</p>	<p>Գործարարական հարցեր</p> <p>Գործարարական հարցի մասին 1930 թվականի մարտի 1-ին հռոմեական կայսրության կողմից ստորագրված հռչակագրի հիման վրա։</p> <p>Գործարարական հարցի մասին 1930 թվականի մարտի 1-ին հռոմեական կայսրության կողմից ստորագրված հռչակագրի հիման վրա։</p> <p>Գործարարական հարցի մասին 1930 թվականի մարտի 1-ին հռոմեական կայսրության կողմից ստորագրված հռչակագրի հիման վրա։</p>
<p>Վերջին ցուցանիշներ</p> <p>1930 թվականի օգոստոսի 1-ին արժեքի ցուցանիշներ</p> <p>1930 թվականի օգոստոսի 1-ին արժեքի ցուցանիշներ</p> <p>1930 թվականի օգոստոսի 1-ին արժեքի ցուցանիշներ</p>		
<p>Գործարարական հարցեր</p> <p>Գործարարական հարցի մասին 1930 թվականի մարտի 1-ին հռոմեական կայսրության կողմից ստորագրված հռչակագրի հիման վրա։</p> <p>Գործարարական հարցի մասին 1930 թվականի մարտի 1-ին հռոմեական կայսրության կողմից ստորագրված հռչակագրի հիման վրա։</p> <p>Գործարարական հարցի մասին 1930 թվականի մարտի 1-ին հռոմեական կայսրության կողմից ստորագրված հռչակագրի հիման վրա։</p>	<p>Դրամական հարցեր</p> <p>Վարկի և փողի հարցի մասին 1930 թվականի մարտի 1-ին հռոմեական կայսրության կողմից ստորագրված հռչակագրի հիման վրա։</p> <p>Վարկի և փողի հարցի մասին 1930 թվականի մարտի 1-ին հռոմեական կայսրության կողմից ստորագրված հռչակագրի հիման վրա։</p> <p>Վարկի և փողի հարցի մասին 1930 թվականի մարտի 1-ին հռոմեական կայսրության կողմից ստորագրված հռչակագրի հիման վրա։</p>	<p>Իրավունքի վերաբերյալ</p> <p>Իրավունքի վերաբերյալ կազմակերպության մասին 1930 թվականի մարտի 1-ին հռոմեական կայսրության կողմից ստորագրված հռչակագրի հիման վրա։</p> <p>Իրավունքի վերաբերյալ կազմակերպության մասին 1930 թվականի մարտի 1-ին հռոմեական կայսրության կողմից ստորագրված հռչակագրի հիման վրա։</p> <p>Իրավունքի վերաբերյալ կազմակերպության մասին 1930 թվականի մարտի 1-ին հռոմեական կայսրության կողմից ստորագրված հռչակագրի հիման վրա։</p>

ֆոտոպատճենը, որտեղ գետեղված է օրենքը: Թե որքանո՞վ է այն համապատասխանում կառավարության կողմից վերջնականորեն ընդունված տարբերակին, դժվար է ասել: Համենայն դեպս, Հ. Ղազարյանը գրում է, թե իրականում օրենքն ունեցել է ութ հոդված, որոնցից հինգը գաղտնի են պահվել³³: Այս հարցը կարիք ունի հետագա հետազոտման:

Վերը նշված անձշտություններին ու շփոթումներին վերջ տալու լավագույն միջոցը «Տեղահանության օրենքի» տեքստի պաշտոնական տարբերակի հայերեն թարգմանության ներկայացնելն է գիտական հասարակայնությանը, ինչը հնարավոր եղավ իրականացնել միայն ձեռքի տակ ունենալով «Թաքվիմ-ի վաքայի» պաշտոնաթերթի 1915 թ. հունիսի 1-ի համարի ֆոտոպատճենը: Ցայսօր գիտական շրջանառության մեջ գտնվող օրենքի հայերեն թարգմանությունները կատարվել են նրա աղճատված տարբերակներից³⁴:

Ստորև հրապարակվող «Տեղահանության օրենքի» պաշտոնական տարբերակը փաստում է, որ այն ունեցել է չորս հոդված, ընդունվել է 1915 թ. մայիսի 27-ին, գործողության մեջ է մտել 1915 թ. հունիսի 1-ին և նրա իրագործման պատասխանատվությունը դրվել է անձամբ Էնվերի վրա: Օրենքի տակ դրված են սուլթան Մեհմեդ Ռեշադ V, սադրազամ (Նախարարների խորհրդի նախագահ) Մեհմեդ Սաիդ Հալիմ փաշայի և Գլխավոր հրամանատարի տեղակալ ու ռազմական նախարար Էնվերի անունները:

* * *

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՅԱՆԴԵՍ
ԵԿՈՂՆԵՐԻ ՆԿԱՍՄԱՍԲ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕՐԵՆՔ³⁵

Հոդված 1. Պատերազմի ժամանակ բանակների, զորաբանակների և դիվիզիաների հրամանատարներն ու նրանց տեղակալները և առանձին դիրքերի հրամանատարները՝ բնակչության կողմից կառավարության հրամանների, երկրի պաշտպանության ու հանգստի ապահովման հետ կապված գործողությունների և միջոցառումների դեմ ընդդիմության, զենքով հարձակման և դիմադրության որևիցե դրսևորում տեսնելու դեպքում լիազորված ու պարտավոր են զենքի ուժով անհապաղ ամենախիստ ձևով պատժամիջոցներ կիրառել և հարձակումն ու ընդդիմանալը հիմնովին վերացնել:

Հոդված 2. Բանակների և առանձին զորաբանակների ու դիվիզիաների հրամանատարները ռազմական հատուկ օրենքների վրա հիմնվելով՝ լրտեսություն կամ դավաճանություն կանխազգալով կարող են գյուղերի և գյուղաքաղաքների բնակչությանն առանձին-առանձին կամ զանգվածաբար այլ բնակատեղիներ ուղարկել ու բնակեցնել:

Հոդված 3. Սույն օրենքը գործողության մեջ է մտնում հրապարակման օրվանից:

³³ Հ ա յ կ ա գ ն Գ. Ղ ա զ ա ռ յ ա ն. նշվ. աշխ., էջ 328:

³⁴ Նույն տեղում, էջ 69-70, 180-181, I, և ն ն Վ ա ռ յ ա ն. նշվ. աշխ., էջ 117:

³⁵ Բնագիրը տե՛ս Tâkvim-i vakâyî, 18 receb 1333 / 19 mayıs 1331, 7. sene, nr. 2189, s. 1.

Հոդված 4. Սույն օրենքի դրույթների գործադրման համար պատասխանատու է Գլխավոր հրամանատարի տեղակալը և ռազմական նախարարը:

Բարեհաճեցի հրամայել, որ օրինականությունն ապահովելու նպատակով սույն օրենքի տեքստը ներկայացվի Ընդհանուր ժողովի նիստում³⁶, ժամանակավորապես դրվի գործողության մեջ և հավելվի պետության օրենքներին:

13 Ռեզեփի 1333, 14 Մայիսի 1331³⁷
Ռեշադ³⁸

Ս ադրազաւ
Մեհմեդ Սաիդ³⁹

Գլխավոր հրամանատարի տեղակալ և ռազմական նախարար
Էնվեր

"ЗАКОН О ДЕПОРТАЦИИ" 1915 Г. ОСМАНСКОЙ ИМПЕРИИ

РУБЕН САФРАСТЯН

Р е з ю м е

В 1915 г. правительство Османской империи издало временный закон, призванный придать "легитимный" характер уже начавшемуся процессу геноцида армянского народа. Этот закон принято называть "Законом о депортации". До сегодняшнего дня ряд вопросов, связанных с обстоятельствами принятия этого закона, а также с его содержанием, вызывают споры в среде специалистов, в частности, вопрос о датах принятия и введения в действие этого закона. Даже в работах таких известных специалистов как В. Дадрян, Г. Казарян, И. Х. Данышменд, Т. Акчам и др. эти даты отличаются друг от друга и не соответствуют действительным. Многие авторы путают их между собой, а также с датой секретной записки министра внутренних дел Талаата правительству страны с требованием начать депортацию армян и датой заседания правительства, на котором было принято решение о начале депортации. Спорным является и вопрос о самом содержании закона. Многие турецкие историки, за небольшим исключением, как старшего поколения, так и молодые, пишут, что закон имел всего три статьи, что не соответствует действительности, так как на самом деле закон состоял из четырех статей. Так пишут даже те авторы, которые ссылаются на его исполнение было возложено на военного министра Энвера, как записано об этом в четвертой, всячески скрываемой статье. Основу этой "традиции фальсификации" заложило само османское

³⁶ Խոսքը օսմանյան խորհրդարանի վերին և ստորին պալատների համատեղ նիստի մասին է:

³⁷ Առաջին ամսաթիվը հիշրա օրացուցային համակարգով է, երկրորդը՝ ումի: Համապատասխանում է 1915 թ. մայիսի 27-ին:

³⁸ Սուլթան Մեհմեդ Ռեշադ V:

³⁹ Սադրազավ Մեհմեդ Սաիդ Հալիֆ փաշա:

правительство еще в 1916 г., включив фальсифицированный текст “Закона о депортации” в изданную им специальную книгу, призванную отвести от своих членов ответственность за преступление геноцида. С целью положить конец спорам и попыткам фальсификаций публикуется перевод официального текста закона, опубликованный газетой “Таквим-и вакай”, и фотокопия первой страницы. Она свидетельствует, что закон был принят правительством 27 мая, введен в действие 1 июня и состоял из четырех статей. Закон был подписан султаном, председателем кабинета министров и военным министром, а исполнение его было возложено на последнего.

THE OTTOMAN EMPIRE'S "DEPORTATION LAW" OF 1915

RUBEN SAFRASTYAN

S u m m a r y

The present article deals with the provisory law, issued by the Ottoman government in 1915, which was intended to provide the "legal" basis for the already being under way processes of the Armenian Genocide. This law is known as "Deportation Law". Important details connected with this Law cause controversies in historiography. First, they are the dates of adopting this Law and carrying it into effect, which created confusion in the monographs of such well-known specialists, as V. Dadrian, H. Ghazarian, I. H. Danismend, T. Akcam, and many others. Another controversial question is the problem of content of the Law. Many Turkish historians falsify its content and write that the Law consisted only of three articles, which is not true. Such position results from the desire to veil the name of Enver, who, according to the "hidden" forth article was appointed responsible for implementation of the Law. Author argues that this "tradition of falsifying" originated from the official book published by the Ottoman government as early as 1916 with the purpose to cover up all traces of the crime and to escape punishment for the Armenian Genocide. In order to put an end to above-mentioned controversies the author as an annex to the present article publishes the photographic copy of the first page of official newspaper "Tâkvim-i vakâyî" from June 1, 1915 with the approved by the Ottoman government text of the "Deportation Law" and provides them with the translation into Armenian. This text is a testimony to the fact that the Law was adopted by the government on May 27, put in force on June 1, consisted of 4 articles, and responsible for its implementation was appointed war minister Enver. The Law was signed by sultan, head of Cabinet of ministers and by war minister.